«Անկախ դիտորդի» հայտարարությունը 2022 թ. մարտի 27-ի Վեդի համայնքի արտահերթ ընտրությունների վերաբերյալ

2022 թ. մարտի 27-ին Վեդի համայնքում տեղի են ունեցել համայնքի ավագանու արտահերթ ընտրություններ: Համայնքում ձևավորվել է 28 տեղամաս: «Անկախ դիտորդ» դաշինքը դիտարկել է բոլոր տեղամասերը 8 դիտորդների կազմով, ներգրավելով մեկ տեղեկատվության մուտքագրողի և իրավաբանի:

Վեդի համայնքում 2021 թ. դեկտեմբերի 5-ին անցկացված ընտրություններին մասնակցում էին Իմ հզոր համայնքը (ԻՀՀ), Քաղաքացիական պայմանագիր (ՔՊ) և Հանրապետություն կուսակցությունները: Այս ընտրությունների արդյունքում առավելագույն քվե ստացավ ԻՀՀ կուսակցությունը, սակայն ոչ ձայների կեսից ավելին: Քաղաքական կոալիցիա ձևավորելու շուրջ համաձայնության չգալով՝ ՔՊ և Հանրապետություն կուսակցությունների բոլոր թեկնածուները ինքնաբացարկ հայտնեցին, ինչի արդյունքում ընտրությունները ճանաչվեցին չկայացած և նոր արտահերթ ընտրություններ նշանակվեցին:

Մարտի 27-ին կայացած ընտրություններին մասնակցեցին ՔՊ և ԻՀՀ կուսակցությունները: ԻՀՀ կուսակցությունը ներկայացավ 80 թեկնածուներից կազմված ընտրական ցուցակով, որը գլխավորում էր կուսակցության հիմնադիր՝ Սիսավան համայնքի նախկին ղեկավար Սպարտակ Թարթիկյանը: ՔՊ կուսակցությունը ընտրություններին մասնակցեց թույլատրելի առավելագույն 81 թեկնածուից բաղկացած ընտրական ցուցակով, որը գլխավորում էր Արարատի նախկին մարզպետ և մինչև ընտրությունները Վեդի համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակված Գարիկ Սարգսյանը:
ԻՀՀ կուսակցության ընտրական ցուցակում ներկայացված էին Վեդի խոշորացված համայնքի 19 բնակավայրերից 18-ը, իսկ ՔՊ կուսակցության ցուցակում բոլոր 19-ը բնակավայրերը:

Քվեարկության մասնակիցների թիվը նախորդից 3254-ով ավել էր: Ընտրությունների նախնական արդյունքներով ՔՊ կուսակցությունը ստացավ վավեր քվեաթերթիկների 57.5%-ը, իսկ ԻՀՀ կուսակցությունը 42.5%-ը:



Մեթոդաբանություն

«Անկախ դիտորդ» դաշինքը 2022 թ. մարտի 27-ի ընտրությունները դիտարկել է միայն քվեարկության օրը՝ շրջիկ դիտորդների ուժերով, պարբերաբար դիտարկելով բոլոր տեղամասերը և չունենալով քվեարկության ամբողջ օրվա ընթացքում տեղամասում տեղակայված դիտորդներ:

Կարճաժամկետ դիտարկումներն իրականացվել են Հանձնաժողովի նիստի, քվեարկության ընթացքի և ձայների ամփոփման վերաբերյալ ընտրական օրենսդրության կարգավորումների կիրառումը գնահատող հարցաշարերի հիման վրա: Միաժամանակ գնահատվել է տեղամասային կենտրոնների մատչելիությունը և քվեարկության օրվա ընդհանուր իրավիճակն ու հնարավոր ռիսկերը:

Նախընտրական քարոզչության փուլում ԶԼՄ-ներում հրապարակված հիմնական խախտումները

2022 թ. հունվարի 5-ին ՔՊ կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար և կուսակցության համայնքի ղեկավարի թեկնածու Գարիկ Սարգսյանը նշանակվեց Վեդի համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար: Փետրվարի 7-ին Վեդիի համայնքապետարանը հրապարակել է տեղեկատվություն, որ գործարկվում է համայնքի բնակավայրերն իրար կապող անվճար երթուղի: Այս մասին հրապարակում է կատարել նաև համայնքի ղեկավարի պաշտոնակատարը[1]: Ըստ շրջանառված տեղեկատվության

[1] Վեդու համայնքապետարանի նախաձեռնությամբ մեկնարկում է անվճար միջհամայնքային երթուղի, որը կապահովի Վեդի համայնքի բնակավայրերի միջև տրանսպորտային կապը

երթուղայինի վարորդը համայնքի ղեկավարի վարորդն է: Թեև նախաձեռնությունը մեկնարկել է նախընտրական քարոզչության փուլից առաջ, այն այնուամենայնիվ կարող է մեկնաբանվել որպես վարչական ռեսուրսի չարաշահում և ընտրակաշառք: Այսպես կարելի է մեկնաբանել նաև նույն փուլում տարբեր բնակավայրերում տրամադրված սոցիալական աջակցությունը:[2]

Մարտի 25-ին ստացվել է տեղեկատվություն, որ ՔՊ կուսակցության հանրահավաքի ժամանակ վիճաբանություն է տեղի ունեցել, որի ընթացքում տուժել է կուսակցության թեկնածու Նշան Հովհաննիսյանը: Միջադեպի վերաբերյալ հրապարակում կատարած civic.am-ը մեջբերել է ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյանին, որը միջադեպը սադրանք է որակել, մինչդեռ ոստիկանությունն այն ներկայացրել է, որպես կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանություն, որի ընթացքում բերման է ենթարկվել հինգ անձ:[3]

Քվեարկության օրն արձանագրված հիմնական խախտումները

Հանձնաժողովի առավոտվա նիստը դիտարկվել է 28 ՏԸՀ-ներից 5-ում, որոնցից 2-ում նիստը սկսվել է ուշ՝ հանձնաժողովի անդամների ուշացման պատճառով: Դիտարկվող տեղամասերից միայն մեկում էր ներկա գտնվելու իրավունք չունեցող անձ՝ ոստիկան, որը սակայն որևէ կերպ չէր միջամտում: Մեկ տեղամասում հանձնաժողովի անդամների գործառույթները մասամբ էին վիճակահանությամբ բաժանվել և որոշվել էր հետագա վիճակահանությունն իրականացնել բացակա անդամների ժամանումից հետո: Տեղամասերից 3-ում նախագահի գործառույթները մասամբ իրենց վրա էին վերցնում հանձնաժողովի մյուս անդամները՝ հիմնականում հիմնավորելով իրենց փորձառությամբ: Նիստի ընթացքում միջադեպեր չեն արձանագրվել:

Հարկ է նշել, որ ընթացակարգը այնուամենայնիվ խախտվել է բոլոր դիտարկված, ինչպես և, վստահաբար, չդիտարկված տեղամասերում: Ընտրական օրենսգիրքը և հանձնաժողովի անդամների ուղեցույցը պահանջում են նախագահից վիճակահանության արդյունքները գրանցելուց անմիջապես հետո ստուգել տեխնիկական սարքավորման աշխատանքը, տպել և գրանցամատյանում փակցնել ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը: Այդուհանդերձ, տեխնիկական սարքավորումների ծրագիրը թույլ չի տալիս տպել այդ տեղեկանքը մինչև 8:00, ինչի պատճառով բոլոր հանձնաժողովները շեղվել են ընթացակարգով նախանշված հերթականությունից: Քվեարկության պարագաները առկա

---

https://armpublic.com/vedu-hamaynqapetarani-naxajerrnutyamb-meknarkum-e-anvchar-mijhamaynqayin-ertughi-ory-kapahovi-vedi-hamaynqi-bnakavayreri-mijew-transportayin-kapy/

[2] ՏԵՂԵԿԱՆՔ 2022 թ. մարտի 27-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դիտարկման արդյունքների վերաբերյալ , Ականատես https://transparency.am/hy/publication/pdf/272/9624

[3] Վեդիում վիճաբանության մասնակից 5 անձ բերման է ենթարկվել. նրանցից մեկը ստացել է մարմնական վնասվածք. ոստիկանություն
https://civic.am/society/28360-vedium-vijabanutyan-masnakic-5-andz-berman-e-entarkvel.html

են եղել բոլոր տեղամասերում, սակայն, կրկին, թե առավոտյան դիտարկված, թե օրվա ընթացքում դիտարկված բոլոր տեղամասերում առկա չեն եղել տեղեկատվական պաստառները՝ քվեաթերթիկի նմուշը, քվեարկության կարգը և կուսակցությունների ամբողջական ցուցակը պարունակող պաստառները: Այդ նյութերը, ինչպես և թույլ տեսողություն ունեցող անձանց ինքնուրույն քվեարկության համար նախատեսված խոշորացույցները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին չեն տրամադրվել ԿԸՀ-ի կողմից:

Դիտարկված տեղամասերում նիստը, բացառությամբ Լանջանիստ բնակավայրի տեղամասի, վերահսկվել է երկու թեկնածու կուսակցությունների վստահված անձանց կողմից, իսկ երկու տեղամասերում նաև «Ժողովրդավարության իրավունքի միջազգային կենտրոն» ՀԿ-ի դիտորդների կողմից:

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ 2022 թ. հունվարի մեկից ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները հաստատում են տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացրած տեղամասային կենտրոնները՝ Ընտրական օրենսգրքի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին համապատասխանության հիման վրա: ԿԸՀ կարգը հաստատվել է 2022 թ. մարտի 24-ին և Վեդի համայնքի տեղամասային կենտրոնների սահմանման ժամանակ չի կիրառվել: Մարտի 27-ին ընտրությունները կազմակերպվել են միևնույն տեղամասային կենտրոններում, որտեղ կազմակերպվել էին դեկտեմբերի 5-ին:

Ուշագրավ է Այգավան բնակավայրի 13/22 տեղամասում ՔՊ վստահված անձի և հանձնաժողովի նախագահի համագործակցությունը. առանց վկայական ներկայացած վստահված անձին ընդառաջ գալով նրան վկայականը տրամադրել է հանձնաժողովի նախագահը, ով ներկայացված է եղել ՔՊ-ի կողմից: Մինչդեռ իրավիճակը բացատրվում է լոգիստիկ նկատառումներով, նման փոխկապակցվածությունը խաթարում է հանձնաժողովի նախագահի քաղաքական անկողմնակալության հանրային ընկալումը և օրենսդրական պարտավորությունը, որն ստանձնում է ի պաշտոնե:

Քվեարկության գաղտնիության ապահովման տեսանկյունից քվեախցիկների դիրքը հիմնականում բավարար է գնահատվել, իսկ որոշակի մտահոգություն առաջացրած խցիկների դիրքը փոխվել է:

Դիտարկված բոլոր 5 տեղամասերը քվեարկության համար բացվել են 8:00-ին՝ առանց ուշացման:

Տեղամասային կենտրոնների մատչելիությունը

Մատչելիության գնահատումը իրականացվել է 28 տեղամասերից 26-ում: Տեղամասային կենտրոններից որևէ մեկը մատչելի չի գնահատվել:

Բացառությամբ մեկ տեղամասային կենտրոնի բոլոր տեղամասային կենտրոնների մուտքը հասնելու ճանապարհին եղել են խոչընդոտներ:



Նույնիսկ այն տեղամասային կենտրոնը, որի մուտքի մոտ խոչընդոտներ են եղել, թույլ չի տվել հեշաշարժական խնդիրներով անձանց ազատ տեղաշարժը ներսում, իսկ 6-7 ընտրողների միաժամանակյա ներկայության դեպքում առաջանում էր կուտակում:

Բացառությամբ մեկ տեղամասի, մյուս գնահատված տեղամասային կենտրոնների մուտքերը ունեցել են աստիճաններ և այդ 25 տեղամասերից միայն երկուսն են ունեցել մատչելի, ոչ ավել քան 8° թեքություն և բռնածող ունեցող թեքահարթակ: Տեղամասերից 19 ընդհանրապես չեն ունեցել թեքահարթակ կամ այն գնահատվել է որպես ոչ մատչելի (անկիրառելի հեշաշարժական խնդիրներ ունեցող անձանց համար): Աստիճաններ են եղել նաև 15 տեղամասերի տեղամասային կենտրոնի մուտքից մինչև քվեարկության խցիկ և քվեարկության արկղ հասնելու երթուղու վրա: Հինգում դրանք գնահատվել են որպես շատ կամ ծայրահեղ շատ խոչընդոտող: Երեք տեղամասում ընտրողի երթուղու վրա նկատվել են նաև այլ առարկաներ, որոնք գնահատվել են, որպես շատ խոչընդոտող, ընդ որում, դրանցից երկուսը աստիճաններ են ունեցել նաև քվեասենյակի ներսում: 8 տեղամասային կենտրոնում մուտքից մինչև քվեարկության սենյակ եղել են չլուսավորվող հատվածներ, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ թույլ տեսողություն ունեցող ընտրողների համար:

Լանջանիստ գյուղում քվեասենյակը գտնվել է համայնքի վարչական ղեկավարի նստավայրում, որը համատեղության կարգով բնակավայրի մշակույթի տունն է: Տեղամասային կենտրոնի մուտքի և ընդհանուր տարածքի անմատչելիությանը գումարվել է այն, որ քվեասենյակի տարածքը բավարար չէր նույնիսկ հանձնաժողովի բոլոր անդամների միաժամանակյա ներկայության համար:

Հարկ է նշել, որ տեղամասերում չեն եղել ոչ միայն մատչելիության ապահովման համար նախատեսված հատուկ միջոցներ կամ մեկ քվեաթերթիկով քվեարկելու համար նախատեսված բրայլյան կաղապարը, այլև խոշորացույց ոսպնյակը, որը օգտագործվում է տարիներ ի վեր: Ինչպես դաշինքին պարզաբանել էին ԸԸՀ-ում, խոշորացույցը չէր ուղարկվել ԿԸՀ-ից: Չէին ուղարկվել նաև քվեաթերթիկի նմուշը, քվեարկության կարգը և կուսակցությունների ընտրական ցուցակների պաստառները:

Դիտորդների գնահատմամբ քվեարկության սենյակներից միայն 7-ն էին թույլ տալիս հենաշարժական կամ այլ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող հանձնաժողովի անդամների տևական ներկայությունը: Հարկ է նշել, որ այս «տևական ներկայությունը» պետք է ընդունել վերապահումով, քանի որ թե այս, թե մյուս տեղամասային կենտրոններում խիստ մտահոգիչ էր սանհանգույցների վիճակը: Տեղամասային կենտրոններում սանհանգույցների առկայությունը քվեարկության հետ ուղղակիորեն կապ չունեցող, սակայն ընտրական վարչարարությունն իրականացնող առաջնային օղակի աշխատանքի վրա ազդող և իր հանդեպ վերաբերմունքը արտացոլող հարց է: Տեղամասերի ⅓-ը չունեին սանհանգույց, իսկ ունեցածների զգալի մասի սանհանգույցը չէր գործում: Հարկ է նշել, որ բոլոր տեղամասային կենտրոնները տեղակայված էին հանրային նշանակության շինություններում: Դրանցից 10-ը գտնվում էին դպրոցում, 14-ը մշակույթի տներում, 1-գրադարանում և 3-ը մանկապարտեզում: Խիստ անընդունելի է այս շինությունների անմատչելիությունը, սանհանգույցների բացակայությունը կամ անմխիթար վիճակը և ընդհանուր ջեռուցման բացակայությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներից միայն 8-ն են նշել, որ վերապատրաստված են՝ հաշմանդամություն ունեցող ընտրողների աջակցելու տեսանկյունից:

Խնդրահարույց է եղել նաև որոշ քվեարկության սենյակների լուսավորությունը.



Քվեարկության ընթացքում դիտարկվող տեղամասերում և տեղամասային կենտրոնների շրջանակներում դիտորդների կողմից արձանագրված հիմնական խախտումներն են եղել կուտակումները, ընտրողների տեղափոխությունը, քվեախցիկում մեկից ավել անձանց միաժամանակյա գտնվելը:

Հարկ է նշել, որ առանձին տեղամասերի շրջակայքում (50 և 100 մ շառավղով) կուտակումները բաղկացած են եղել երկու ուժերի ներկայացուցիչներից կամ բաժանված են եղել երկու ճամբարների և կրել ոչ միայն տևական, այլև շուրջօրյա բնույթ՝ շարունակվելով մինչև ձայների հաշվարկի ավարտը և վերափոխվելով տոնախմբության «իրենց» թեկնածուի հաղթանակի դեպքում: Ի տարբերություն հաճախ հանդիպող 5-10 հոգանոց կուտակումների, այս ընտրություններին առաքելությունը ականատես էր դարձել որոշ դեպքերում մի քանի տասնյակ մեքենաների և մարդկանց հավաքների: Միաժամանակ հարկ է նշել, որ միայն 4 դեպքում են նկատվել կուտակման հետ զուգորդվող ընտրողների տեղափոխության դեպքեր: Այս իրադրության վրա կանգ առնելով անհրաժեշտ է պարզաբանել. 3 բնակավայրերում ընտրողների տեղափոխությունը իրականացվում էր թեթև մարդատար ավտոմոբիլներով՝ բազմաթիվ անձանց կողմից, սակայն դիտարկվող ժամանակահատվածներում 1-2 անգամ

մեկական անձ, իսկ Վանաշեն բնակավայրում՝ Երևան-Վեդի երթուղային ավտոբուսի միջոցով: Չնայած դիտորդները ավտոբուսը տեսել են դատարկ երթևեկելիս, ԻՀՀ կուսակցության վստահված անձի խոստովանությամբ տեղափոխությունը կազմակերպված է եղել հենց իր կուսակցության կողմից՝ երևանաբնակ համագյուղացիների համար:

Վիճաբանության երեք դեպքերից երկուսը կապված են եղել ՔՊ կուսակցության հետ: Եթե դեպքերից մեկը իրենից ներկայացնում էր հաճախ հանդիպող՝ հանձնաժողովի նախագահի և վստահված անձի միջև բուռն անհամաձայնություն, ապա մյուսը՝ տվյալ ընտրություններում որևէ կարգավիճակ չունեցող ԱԺ ՔՊ խմբակցության երկու պատգամավորների վեճն էր ԻՀՀ վստահված անձի, 168.am լրատվական կայքի ներկայացուցչի և տեղամասում հերթապահություն իրականացող ոստիկանի հետ: ՀՀ ԱԺ պատգամավորներ Աղազարյանն և Ասլանյանը տեղամասերով շրջագայելով նկատել էին տեղամասային կենտրոններից մեկում (սակայն ոչ քվեարկության սենյակում) ԻՀՀ 2-րդ վստահված անձի և ինքնուրույն դուրս հրավիրել նրան: Վեճը բավականին տևական բնույթ էր կրում քանի որ պատգամավորները ոչ միայն չէին հեռանում ՏԿ տարածքից, պնդելով իրենց ներկայության «սահմանադրական իրավունքը», այլև մտել էին քվեարկության սենյակ և հեռացել միայն հանձնաժողովի նախագահի հորդորից հետո: Դիտարկման ընթացքում ակնհայտ է դարձել, որ պատգամավորներն իրենց հերթին չեն ունեցել տեղամասային կենտրոնում գտնվելու իրավունք նախատեսող որևէ կարգավիճակ և վստահեցրել են, որ իրենց պատգամավորական մանդատն իրավունք է տալիս գտնվել տեղամասային կենտրոնում:

Մինչդեռ դիտորդների կողմից արձանագրած երեք վիճաբանություններից որևէ մեկի դեպքում բռնություն չի կիրառվել և բուն վեճի խոսույթը չէր պարունակում ճնշման կամ մասնագիտական գործառույթները իրականացնելու խոչընդոտ, առաքելությանը հայտնի է դարձել Ուրցաձոր բնակավայրում ծեծի մեկ դեպք: Այս դեպքն էլ, երկու կողմի ներկայացուցիչների պնդմամբ, կրում էր կենցաղային շարժառիթներ, որոնք սրվել էին քաղաքական պայքարի ֆոնին: Այնուամենայնիվ, դեպքի վերաբերյալ գործ է հարուցվել ոստիկանության կողմից Քր. օր.-ի 149.2 հոդվածի հիմքով:

Լրագրողի մասնագիտական գործունեության խոչընդոտման դեպք է արձանագրվել, Լուսառատ բնակավայրում, որտեղ կուտակման մասնակիցներից մի քանիսը վիրավորական արտահայտություններ էին հնչեցնում News.am լրատվականի թղթակցի հասցեին: Այնուամենայնիվ, իրավիճակը հանգուցալուծվեց ոստիկանների օգնությամբ, որոնք տարածքից հեռացրեցին մեկ անձի:

Ընտրողների կողմից քվեարկությունից առաջ կամ հետո կուսակցության շտաբ մտնելը նկատվել է Եղեգնուտ և Լուսառատ համայնքներում՝ երկու դեպքում էլ խոսքը գնում է ՔՊ կուսակցության շտաբների մասին:

Քվեարկության գաղտնիության բացահայտման արձանագրված մեկ դեպքը վերաբերում էր միայն քվեարկությունից հետո որպես օգնող գրանցված քաղաքացու կողմից այլ անձի հետ քվեարկության խցիկ մուտք գործելուն: Միաժամանակ առաքելությանը հայտնի են դարձել Վեդի քաղաքի 13/5 տեղամասում քվեարկած քվեաթերթիկի լուսանկարման երկու դեպք՝ յուրաքանչյուր կուսակցության օգտին մեկական քվեաթերթիկի: Երկու դեպքում էլ ոստիկանությունը բացատրություն է վերցրել ընտրողներից և հանգամանքները ուսումնասիրվում են:

Քարոզչության ակներև դեպք է արձանագրվել Սիսավան համայնքում, որտեղ հանձնաժողովի 2 անդամները (Հայաստան խմբակցության և ԸԸՀ-ի կողմից նշանակված) ԻՀՀ առաջին համարի թեկնածու, միևնույն համայնքի նախկին ղեկավարի քվեարկության ժամանակ հոտնկայս ծափահարություններով դիմում էին մյուս անդամներին և Թարթիկյանի հետ տեղամաս ժամանած լրագրողներին. «Ողջունենք մեր հաղթանակած թեկնածուին» կոչերով: Դաշինքի դիտորդները ծանոթացել են իրավիճակին տեղամասի գրանցամատյանում արված արձանագրությունից, ինչից հետո առանձնազրույցներ են ունեցել հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և միջադեպում ներգրավված երկու անդամների հետ՝ կողմերից ոչ մեկը չի վիճարկել արձանագրության ճշմարտացիությունը: Զրույցների բովանդակությունից պարզ է դառնում, որ խնդրահարույց է եղել նաև ՁԼՄ-ների վարքագիծը. Հ2 հեռուստատեսության թիմը տեղամասի մոտ իրականացրել է կարճ հարցումներ ընտրողների հետ, հարցադրելով, արդյո՞ք «դուք ուզու՞մ եք ունենալ *հզոր համայնք*», թեկնածուի հետ ՏԿ մտած ՁԼՄ-ների ներկայացուցիչները չէին գրանցվել գրանցամատյանում, նկարահանել են միայն ծափողջույնների հատվածը և դադարեցրել նկարահանումը, երբ հանձնաժողովի նախագահը նկատողություն է արել հանձնաժողովի անդամներին: Այնուհետև, խնդրահարույց է նաև հանձնաժողովի նախագահի վարքագիծը, ով հեռացրել է տեղամասային կենտրոնից լրագրողներին՝ առանց ընթացակարգերը հարգելու:

Ընդհանուր առմամբ տարբեր ժամերին համայնքում խնդիրների ռիսկայնությունը տարբերվել է, ինչպես դա երևում է դիտորդների կողմից յուրաքանչյուր երեք ժամը ներկայացվող ամփոփ զեկույցներից: Ռիսկայնությունը գնահատվել է 1-4 սանդղակով, որտեղ 4-ն առավելագույն ռիսկայնությունն է: Գնահատականի հիմքում դիտորդները հաշվի են առել ոչ միայն իրենց դիտարկած միջադեպերը, այլև երկու կողմերի վստահված անձանց, տարբեր խմբակցություններից ներկայացված հանձնաժողովի անդամների և այլ աղբյուրներից ձեռք բերված տեղեկությունները: Ստորև բերված գծապատկերում ներկայացված են դիտորդների միջինացված գնահատականները:



Այսպիսով օրվա ընթացքում հիմնական խնդիր են եղել կուտակումները, ապա կողմնակի անձանց ներկայությունը և հանձնաժողովների ոչ կոմպետենտությունը:

Ձայների հաշվարկ

Ձայների հաշվարկը դիտարկվել է 5 տեղամասերում, որոնցից 3-ում դիտարկվել է ամբողջությամբ:

Բոլոր դիտարկված տեղամասերում ներկա են եղել երկու կողմերի վստահված անձինք և թեկնածուները, ինչը որոշակի իմաստով երաշխավորում է հաշվարկի գործընթացի անաչառությունը: Հարկ է նշել, որ 13/22 տեղամասում միաժամանակ ներկա էին մեկից ավել վստահված անձ երկու կողմերից էլ, իսկ ԺԻՄԿ դիտորդների ելումուտը չէր արտացոլվում գրանցամատյանում: Ուշագրավ է նաև ընտրություններին հավատարմագրած դիտորդական առաքելություն իրականացնող «Ժողովրդավարության իրավունքի միջազգային կենտրոն» ՀԿ-ի դիտորդների վարքագիծը, որը նկատվել է ողջ օրվա ընթացքում, բայց առավել ցցուն է դարձել ձայների հաշվարկին: Կազմակերպության դիտորդները բոլոր տեղամասերում հանդես էին գալիս ԻՀՀ վստահված անձանց հետ միասին՝ համանման նկարագրություններ և արձագանք էին տալիս իրավիճակների: Նրանք որոշ տեղերում ուղղակի ներկայանում էին որպես ԻՀՀ կուսակցության դիտորդ և չէին ընդդիմանում, երբ հանձնաժողովների անդամներին իրենց այդ կերպ բնութագրում: Ձայների հաշվարկի ընթացքում կազմակերպության դիտորդները դիտարկված տեղամասերից 3-ում զուգահեռ հաշվարկ էին իրականացնում ԻՀՀ վստահված անձանց և թեկնածուների հետ: Ըստ էության, կազմակերպության դիտորդները ամբողջությամբ նույնականանում էին ԻՀՀ կուսակցության հետ և հանդես գալիս որպես լրացուցիչ վստահված անձ:

Դիտարկված տեղամասերից միայն մեկում են փորձել խոչընդոտել առաքելության դիտորդի մուտքը և գրանցամատյանին ծանոթանալու իրավունքը, սակայն խնդիրը լուծվել է հանձնաժողովի նախագահի հետ երկխոսության միջոցով:

Նիստի ընթացակարգը պահպանվել է բոլոր տեղամասերում, բացառությամբ նույն 13/22 տեղամասի, որտեղ հանձնաժողովը արձանագրել էր ելակետային տվյալները, հիմնվելով քվեարկության ժամանակ հընթացս իրականացվող հաշվարկի վրա և չիրականացնելով այն նիստի ընթացքում: Այս նույն տեղամասը միակն էր, որտեղ արձանագրվել է հաշվարկի ընթացքին միջամտության փորձ թեկնածուի կողմից: ԻՀՀ 2-րդ համարի թեկնածուն բացահայտ հորդորում և պահանջում էր Պատիվ ունեմ խմբակցության կողմից նշանակված հանձնաժողովի անդամից՝ քվեաթերթիկների անվավերության վերաբերյալ քվեարկության ժամանակ «պահել մեր ձեները» և անվավեր ճանաչել ՔՊ-ի օգտին խնդրահարույց քվեաթերթիկները:

Այնուամենայնիվ, դիտորդների գնահատմամբ դիտարկված բոլոր տեղամասերում անվավերության հարցում հանձնաժողովների մոտեցումները եղել են միատեսակ:

Եզրահանգումներ

- 2021 թ. դեկտեմբերի 5-ի և 2022 թ. մարտի 27-ին Վեդի համայնքում տեղի ունեցած ընտրություններն ուղեկցվել են քաղաքական խիստ բևեռացվածությամբ և փոխադարձ մեղադրանքներով, որոնց արդյունքում ժամանակ առ ժամանակ տեղեկություններ են ստացվել մասնակից ուժերի ներկայացուցիչների միջև վիճաբանությունների մասին:
  Հատկապես անընդունելի է քվեարկության օրը Ուրցաձոր համայնքի 13/24 տեղամասի դիմաց ոստիկանության ծառայողների ներկայությամբ ընդդիմության համակրի նկատմամբ բռնության կիրառումը ՔՊ կուսակցության համակիրների կողմից:
- Երկու ուժերի խիստ մրցակցությունը տեսանելի է եղել քարոզարշավի և առավել տեսանելի քվեարկության օրը, ինչը արտացոլվել է նաև դեկտեմբերի 5-ի համեմատ 16%-ով բարձր մասնակցությամբ:
- Մինչդեռ ցուցակը գլխավորող թեկնածուները փաստացի ընկալվում են որպես անձ-թեկնածուներ և առաջնային գործոն են, բնակավայրերում նկատելի էր իրենց բնակավայրը «ներկայացնող» թեկնածուի վերաբերյալ սրտացավությունը և մասնակցության կարևորումը:
  Այս հանգամանքը թեև կարող է լարվածության առիթ հանդիսանալ, մյուս կողմից կարող է բարձրացնել կուսակցությունների շահագրգռվածությունը ընտրական ցուցակում համայնքի բնակավայրերի առավելագույն ներկայացվածության համար:

- Չնայած բազմաթիվ խնդիրներին, համամասնական ընտրակարգն աստիճանաբար կարող է փոխել անձնակենտրոն ընտրական մշակույթը և քաղաքականացնել գործընթացը:
- Ընտրական օրենսգրքի մի շարք փոփոխություններ ուժի մեջ են մտել հունվարի 1-ին և փաստացի առաջին անգամ կիրառվել այս ընտրությունների ընթացքում, այդ թվում առաջին անգամ և հաջողությամբ կիրառվել է ՁԼՄ ներկայացուցիչների և դիտորդների հավատարմագրման առցանց համակարգը:
- ՏԻՄ ընտրությունների այս փուլից հետո էական է Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխությունների ամբողջական գնահատումն ու փոփոխությունների վերանայումը՝ հատկապես ուշադրություն դարձնելով վարչական ռեսուրսների չարաշահման արգելքի, քարոզչության վերահսկման, քվեարկության կարգի և ընտրական վարչարարության առավել արդյունավետ իրականացմանը:
- Կասկածելի են 13/27 և 13/28 տեղամասերում արձանագրված քվեարկության արդյունքները, որտեղ երկու կուսակցությունները ստացել են համապատասխանաբար 27/27 և 141/141 ձայն: Ցավոք դիտորդական առաքելությունները չունեն հնարավորություն պահանջելու քվեների վերահաշվարկ, միաժամանակ Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կարող էին սեփական նախաձեռնությամբ վերահաշվարկ անցկացնել այս տեղամասերում՝ համոզվելու, որ այս համընկնումը պատահականություն է և ոչ արդյունքների կեղծում:
- Չնայած երկու մասնակցող ուժերի կողմից ընտրողների մասնակցությունն ապահովելու և քվեարկությունը ուղղորդելուն ուղղված քայլերին, քվեարկության արդյունքները արտացոլում են ընտրողների կամքը և չեն վիճարկվել ուժերից ոչ մեկի կողմից:

«Անկախ դիտորդ» առաքելություն, ի դեմս՝

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի
«Իրազեկ քաղաքացիների միավորման»

Դիտորդական առաքելությունն իրականացվել է Ընտրություններ բոլորի համար 2021 - տեղական դիտորդություն և քաղաքացիական հասարակության կողմից քաղաքացիների իրավազորում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՕքսԷՋԵն հիմնադրամի, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի և Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: